

10530

ՀԱՅԿ. ՆՍՌ ԱՆ. ՄՅԱՍՆԻԿՑԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱԿԱՆ
ԳՐԱԳՈՐԱՆ

ԳՐԱԳՈՐԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԲԱԺԻՆ

2. ՄԻԼՎԱՆՑԱՆ

**ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ - ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ**

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՉԵՈՆԱՐԿ

021
ԵԴ-48

ԵՐԵՎԱՆ

22 MAY 2009

ՀԱՅԿ. ՍՍՌ ԱՎ. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

ԳՐԱԴԱՐԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԲԱԺԻՆ

021
4-48

Հ. ՍԻՎԱՆՅԱՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԶԵՆՆԱՐԿ
ՊՐ. 3

(Օգնություն մասսայական գրադարանի աշխատողին)

Ե Ր Ե Վ Ա Ն

1 9 6 4

О 24
И—48

Խմբագիր՝ Հ. Կ. Կոստիկյան

ГОСУДАРСТВЕННАЯ РЕСПУБЛИКАНСКАЯ БИБЛИОТЕКА
АРМ, ССР. ИМ. А. Ф. МЯСНИКЯНА
МЕТОДИЧЕСКИЙ ОТДЕЛ БИБЛИОТЕКОВЕДЕНИЯ


А. Г. СИЛЬВАНЯН
ПРОПАГАНДА ОБЩЕСТВЕННО-ПОЛИТИЧЕСКОЙ
ЛИТЕРАТУРЫ В БИБЛИОТЕКЕ

(практическое пособие)
Вып. 3
Редактор: Г. К. Костикиян
(На армянском языке)
Ереван—1964

Տեխ. խմբագիր՝ Հ. Մարտիրոսյան
Վերստ. սրբ. Ա. Վևորյան

Վ.Ֆ. 06498 Գատիկեր № 3425 Տիրաժ 100
Հանձնված է արտադրության 25/Х 1964 թ.:
Ստորագրված է արտադրության 12/ХІ 1964 թ.:
Թուղթ՝ 84×108¹/₃₂ Տպագր. Յ,5 մամ., հրատ. 4,3 մամ.:
Գինը 20 կ.

Հայկական ՍՍՌ Միևիտորների սովետի մամուլի պետական կոմիտեի
պոլիգրաֆարգույնաբերության գլխավոր վարչության № 6 սպարան,
Երևան, Թումանյան № 51.



47800-64

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԱՅԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Սովետական գրագարանը հանդիսանում է Կոմունիստական պարտիայի և Սովետական պետության ակտիվ օգնականը գաղափարական նշխատանքի և աշխատավորների կոմունիստական դաստիարակության բնագավառում:

Կոմունիստական պարտիան կարևոր նշանակություն է տալիս սովետական մարդու մատերիալիստական աշխարհայացքի ձևավորմանը, հոգ է տանում այն մասին, որ պետի մարքսիզմ-լենինիզմի գաղափարներին տիրապետեն ժողովրդական լայն մասսաները:

ՍՄԿՊ Կենտրոնական Կոմիտեի «Երկրում գրագարանային գործի վիճակի և նրա բարելավման միջոցների մասին» 1959 թ. որոշման մեջ ասված է, որ «Գրագարանները պետք է դառնան քաղաքական, հանրակրթական, գիտա-տեխնիկական, գյուղատնտեսական և պրոֆեսիոնալ գիտելիքների մասսայական պրոպագանդայի իսկական կենտրոններ, պարտիական կազմակերպությունների հենակետերը՝ աշխատավորների կոմունիստական դաստիարակության գործում»¹:

Հանարակական-քաղաքական թեմաներով գրքերի, բրոշյուրների, ժուռնալների ու թերթերի պրոպագանդան մեծ տեղ է գրավում գրագարանի աշխատանքում: Սովետական մարդիկ հետաքրքրվում են մեր երկրի քաղաքական կյանքով, ակտիվորեն մասնակցում են կոմունիստական հասա-

¹ ՍՄԿՊ Կենտրոնական Կոմիտեում, Երկրում գրագարանային գործի վիճակի և նրա բարելավման միջոցների մասին—«Լենինյան ուղիով», 1959, № 11, էջ 68:

րակութեան կառուցման գործին: Յուրաքանչյուր մարդ, որ ղինված է մարքս-լենինյան աշխարհայացքով, համոզված է կոմունիզմի հաղթանակի մեջ:

Պարտիայի 20-րդ համագումարից հետո սովետական մարդկանց մոտ զգալիորեն աճել է ձգտումը տիրապետելու մարքսիզմ-լենինիզմին, խորը և բաղմակողմանիորեն ուսումնասիրելու Վ. Ի. Լենինի աշխատությունները:

Միևնույն ժամանակ բարձրացել է ընթերցողների հետաքրքրությունը և պահանջը հասարակական-քաղաքական բաղմամբիվ արդիական թեմաների նկատմամբ: Նրանք սիրով ուսումնասիրում են Գիտական կոմունիզմի պրոբլեմները, կոմունիստական դաստիարակության, բարոյականության, էկոնոմիկայի, միջազգային դրություն, պատմության, փիլիսոփայության, Սովետական Միության արտաքին ու ներքին քաղաքականության վերաբերյալ հարցերը: Ընթերցողները մեծ հետաքրքրություն են հանդես բերում հատկապես այն դրքերի նկատմամբ, ուր խոսվում է Սովետական Միության կոմունիստական պարտիայի, կոմունիզմ կառուցող սովետական ժողովրդի: ՍՍՌՄ կոմունիստական շինարարության խնդիրների ու նվաճումների մասին, ինչպես նաև սոցիալիստական երկրների հաշտությունների մասին:

Հասարակական-քաղաքական գրականության ընթերցանությունը պետք է օժանդակի բնության և հասարակության զարգացման հիմնական օրենքների, կոմունիստական պարտիայի քաղաքականության, գիտական հիմունքների ըմբռնմանը:

Նոր մարդու դաստիարակության գործում, կոմունիստական կուլտուրայի ձևավորման գործում հսկայական նշանակություն ունեն արվեստը, գրականությունը, կուլտուր-լուսավորական հիմնարկները, այդ թվում գրադարանները:

Գրքի պրոպագանդայի հիմնական օջախը գրադարանն է: «Առաջին հայացքից համեստ է գրադարանավարի դերը, — ասաց իր ղեկուցման մեջ Լ. Ֆ. Իլյիչովը: Սակայն նրանից ինչքան շատ բան է կախված մարդկանց դաստիարակության

գործում: Ի՞նչ գիրք նա կհանձնարարի, ինչի՞ մասին և ինչպես կգրուցի ընթերցողի հետ, արդյո՞ք ընթերցողների կոնֆերանս կանցկացնի՞ սրանք բոլորը ոչ թե տեխնիկական, այլ գաղափարական մեծ հարցեր են: Չէ՞ որ գրադարանների ընթերցողները ավելի քան հարյուր միլիոն են»¹:

Գրադարանավարի ուժն էլ հենց այն պետք է լինի, որ կարողանա թափանցել ընթերցողի մտքի ու սրտի մեջ: Գաղափարական աշխատանքի ուժալ սրդյունքը պետք է տեսնել այն բանում, թե ինչպիսի տնտեսական, արտադրական բարձր ցուցանիշների են հասել այն կուլեկտիվների անդամները, որտեղ գտնվում են գրադարանները: Կոմունիզմն ու աշխատանքը, դաստիարակությունն ու աշխատանքը, անբաժան են իրարից: Մեզ մոտ նյութական բարիքների ստեղծումը, աշխատանքը, գաղափարական դաստիարակչական խոր բնույթ ունեն:

Գրադարանավարներին անհրաժեշտ է սերտ կապ պահպանել արտադրության աշխատողների հետ, գրքի ակտիվ պրոպագանդայով նպաստել բանվորների, կոլանտեսականների, ինտելիգենցիայի հանրակրթական, քաղաքական, կուլտուրական և գիտատեխնիկական մակարդակի բարձրացմանը:

Գրադարանները պետք է լայն պրոպագանդա ծավալեն մարքսիզմ-լենինիզմի հիմնագիրների աշխատությունների, պարտիայի և կառավարության որոշումների, կոմունիզմի կառուցման ծրագրի, ժամանակակից ակտուալ հարցերի վերաբերյալ գրականության շուրջը, այն գրքերի վերաբերյալ, որոնք օժանդակում են ընթերցողների մատերիալիստական աշխարհայացքի և կոմունիստական բարոյականության նորմաների ձևավորմանը, օգնում են նրանց ծանոթանալու գիտության և արտադրության առաջավոր փորձի նվաճումներ:

¹ Լ. Ֆ. Իլյիչով, Պարտիայի գաղափարական աշխատանքի հերթական խնդիրները: Ձեկուցում ՍՄԿՊ Կենտրոնական կոմիտեի պլենումում, 1963 թ. հունիսի 18-ին: Նր., Հայպետհրատ, 1963. էջ 81:

րին, ինչպես նաև դասական ու սովետական գեղարվեստական գրականության լավագույն երկերին:

Հասարակական-քաղաքական գրականության պրոպագանդան պետք է լինի նպատակասլաց, կոնկրետ և գործուն: Անհրաժեշտ է գրքերն ակտիվորեն հանձնարարել ընթերցողներին, արագորեն արձագանքել ժամանակակից հուզող հարցերին, գրքի պրոպագանդան հմտորեն զուգակցել կոմունիստական շինարարության կոնկրետ խնդիրների հետ, կյանքի հետ:

Գրադարանավարը ձգտում է, որպեսզի աշխատավորները ոչ միայն ընթերցեն գրքեր, ժուռնալներ և թերթեր, այլև հասնել այն բանին, որ այդ ընթերցանությունը տա իր կոնկրետ արդյունքը, օժանդակի արտագրական պլանների կատարմանը, արդյունաբերության և գյուղատնտեսության հետագա վերելքին:

Գրադարանի ընթերցողների թվում քիչ չեն այնպիսիք, որոնք ուսումնասիրում են Մարքսի, Էնգելսի, Լենինի աշխատությունները, պարապում են քաղաքական լուսավորության ցանցում, սովորում են բարձրագույն և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում, զբաղվում են քաղաքական ինքնակրթությամբ: Գրադարանի ընթերցողների թվում կան նաև պրոպագանդիստներ, ագիտատորներ, դասախոսներ, սովետական և պարտիական աշխատողներ, մանկավարժներ, իրավաբաններ, տնտեսագետներ, որոնք հաճախ են դիմում գրադարանավարին հասարակական-քաղաքական գրականության պահանջներով:

Ընթերցողները մեծ սիրով են կարդում Մարքսի, Էնգելսի, Լենինի մասին նշած գրականությունը, ինչպես նաև հանրամատչելի գրքեր նվիրված ՍՄԿՊ պատմության տարբեր ժամանակաշրջաններին, միջազգային քաղաքականությանը, մեր երկրում կոմունիզմի կառուցման հարցերին:

Միշտ չէ, որ գրադարանավարին հաջողվում է հանձնարարել ցանկացած հասարակական-քաղաքական գիրքը: Անհրաժեշտ է յուրաքանչյուր ընթերցողի նկատմամբ կիրառել ան-

հատական մոտեցման և ուսումնասիրման սկզբունքը, որի հիմքում պետք է դրվի՝ պրուցքը ընթերցողի հետ: Այս գործում շպետք է ցուցաբերել շտապողականություն, այդ պրուցքեր երկարատև համառ աշխատանք է պահանջում: Գրադարանավարը պետք է լինի համբերատար, ունենա մանկավարժական սակտ և ձգտում առաջադրված նպատակին հասնելու համար:

Հասարակական-քաղաքական գրականության պրոպագանդան ճիշտ կաղմակերպելու համար անհրաժեշտ է նախ և առաջ ուսումնասիրել ընթերցողների պահանջները, նրանց հետաքրքրասիրության շրջանակները, ընթերցանության նըպատակը, ինչպես նաև ընթերցողների քաղաքական և կրթական պատրաստականության մակարդակը, գրքի հետ ինքնուրույն աշխատելու ունակությունները: Հասարակական-քաղաքական գրականության պրոպագանդան ի վերջո պետք է նպաստի աշխատավորների կոմունիստական աշխարհայացքի ձևավորմանը, սովետական մարդկանց գիտակցության ու վարքագծի մեջ անցյալի մնացուկների հաղթահարմանը, աշխատանքային դաստիարակության գործին, ինչպես նաև ժողովրդի կրթության ու կուլտուրայի բարձրացմանը:

✓ Գրադարանում անհրաժեշտ է ունենալ հասարակական-քաղաքական այնպիսի գրքեր, որոնք կընդլայնեն մարդկանց իմացությունը կյանքի ու բնության օրենքների վերաբերյալ, կօգնեն ավելի խորը ճանաչելու և սիրելու մեր հայրենիքը:

Այն գիրքը, որն օգնում է մարդուն ընդլայնելու իր մտահորիզոնը, հարստացնելու իր գիտելիքների պաշարը, օգնում է աշխատավորին հմտանալու բնորոշ մասնագիտության մեջ և գիտակցաբար ու ակտիվորեն մասնակցելու կոմունիստական շինարարությանը, — հենց այդ գիրքն էլ հարկավոր է համակողմանիորեն դարգացած, կրթված և քաղաքականապես կոիված սովետական մարդուն:

Օգտագործելով գրքի պրոպագանդայի փորձված ձևերն ու մեթոդները, գրադարանավարները պետք է ստեղծագործաբար մոտենան իրենց աշխատանքին և կիրառեն գիրքը ընթերցողներին մոտեցնելու նոր, առաջադեմ մեթոդներ:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՖՈՆԴԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Հասարակական-քաղաքական գրականության ֆոնդերը լավագույն կերպով բացահայտելու նպատակով գրադարանները պետք է համարձակորեն կիրառեն գրադարանային աշխատանքի պրակտիկայում լայն կիրառում գտած բաց գրադարանների սխեմանը, որի պայմաններում ընթերցողները մոտիկից և անձամբ ծանոթանում են գրքերի հետ դարակների մոտ: Բացահայտելով գրքային ֆոնդերը ընթերցողների առաջ, գրադարանը դրանով իսկ բարձրացնում է գրքի տացքը, տարբեր բնագավառների վերաբերյալ գրականության պրոպագանդան և ավելի նպատակասլաց է դարձնում ընթերցողի հետ տարվող աշխատանքը:

Հասարակական-քաղաքական գրականությունը բացահայտելիս անհրաժեշտ է հաշվի առնել գրքերի արդիականությունը, թեմատիկայի առավել լայն ընդգրկումը, նպատակասլացությունը:

Հասարակական-քաղաքական գրականությունն ընդգրկում է բաղմաթիվ հարցեր, օրինակ՝ Մարքս-լենինյան տեսության, ՄՍՌՄ հասարակական-քաղաքական կարգի, Սովետական Միության Կոմունիստական պարտիայի, Համամիութենական լենինյան երիտասարդական միության, ՄՍՌՄ և ընդհանուր պատմության, արտասահմանյան երկրների պատմության, տնտեսական աշխարհագրության, միջազգային դրույթան, ՄՍԽՄ-ում կոմունիստական շինարարության, սովետական մարդկանց ստեղծագործ աշխատանքի, կոմունիստական դաստիարակության, ժողովրդական դեմոկրատիայի երկր-

ներում սոցիալիզմի կառուցման, կապիտալիստական երկրների աշխատավորների կյանքի և այլ հարցերի վերաբերյալ գրականությունը:

Գրադարանները կարող են զանազան թեմաների վերաբերյալ կազմակերպել դրքային ցուցահանդեսներ, բաց գրադարաններ, հաշվի առնելով ընթերցողների առանձին խմբերի պահանջները և նրանց հետաքրքրասիրության շրջանակները: Գրքերի բաց դարակների, ստենդների վրա ցուցադրվում են այնպիսի գրքեր, որոնք բազմակողմանիորեն կլուսաբանեն տվյալ թեման: Առաջին հերթին ցուցադրվում են Մարքսի, Էնգելսի, Լենինի աշխատությունները, պարտիական փաստաթղթերը և տվյալ հարցի կամ թեմայի հետ առնչվող մյուս գրքերը:

Հասարակական-քաղաքական գրականության հետ միասին անհրաժեշտ է ընթերցողների ուշադրությանը ներկայացնել նաև քաղաքական պարբերական մամուլը, ուր հրատարակվում են շատ արժեքավոր հոդվածներ մեր երկրի քաղաքական կյանքի, ներքին և արտաքին քաղաքականության, միջազգային հարցերի վերաբերյալ: Օրինակ, «Коммунист», «Политическое самообразование», «Вопросы истории КПСС», «Լենինյան ուղիով», «Агитатор», «Ագիտատորի բլոկնոտ», «Международная жизнь», «Новое время» և այլն: Իհարկե գրադարանավարը չպետք է սահմանափակվի միայն մամուլի նյութերի ցուցադրումով, անհրաժեշտ է ընթերցողներին հանձնարարել ժուռնալներում և թերթերում գետնողված այն հոդվածները, որոնք կարող են որոշակի հետաքրքրություն ներկայացնել ընթերցողների տվյալ խմբի համար: Այդ ցուցահանդեսներում և թեմատիկ բաց գրադարաններում լայնորեն ներկայացվում են հանձնարարական մատենագիտական ցանկեր և մեթոդական նյութեր:

Հասարակական-քաղաքական գրականության ֆոնդը բացահայտելու նպատակով գրադարանավարը կարող է ցուցադրել գրքեր, բրոշյուրներ և պարբերական մամուլի հոդվածներ հետևյալ թեմաների շուրջը:

Վ. Ի. Լենինը մեր պարտիայի ու Սովետական պետու-
թյան ստեղծողն ու ղեկավարն է:

Պարտիան մեր հաղթանակների կազմակերպիչն է:

Կոմունիստական հասարակության կառուցման լենին-
յան սլանը:

Սովետական Միության Կոմունիստական պարտիան
մեզ տանում է գեպի կոմունիզմ:

Ինչ տվեց Հոկտեմբերը հայ ժողովրդին:

Պետությունը — այդ մենք ենք:

Կոմունիզմի կառուցման մարտական ծրագիրը:

Կոմունիստական պարտիայի հերոսական ուղին:

Մեր ուժը պարտիայի և ժողովրդի միասնության մեջ է:

Ժողովրդական դեմոկրատիայի երկրներում:

Յոթնամյակի կառույցներում:

Մեր փարոսները:

Կոմունիզմը և աշխատանքը:

Միջազգային կոմունիստական շարժումը և պրուլետա-
րական ինտերնացիոնալիզմը:

Կոմունիզմը ժողովուրդների խաղաղությունն ու եր-
ջանկությունն է:

Վ. Ի. Լենինի և նրա զինակիցների մասին:

Մեր հայրենիքի հարստություններն ու նվաճումները:

Կոմունիզմ կառուցողների հերոսական գործերը:

Ինչ կարդալ ՍՄԿՊ-ի մասին:

Օգնություն Վ. Ի. Լենինի աշխատություններն ինքնու-
րույն ուսումնասիրողներին:

Կոմունիստական աշխատանքի բրիգադաների առաջա-
վոր փորձը:

Ինչ կարդալ սովետական փառապանծ բանակի մասին:

Խաղաղությունը կհաղթի պատերազմին:

Վ. Ի. Լենինը կոմունիստական դաստիարակության
մասին:

Աշխարհի երիտասարդության պայքարը հանուն խա-
ղաղության:

ՍՍՌՄ ժողովուրդների մեծ ու անխախտ բարեկամու-
թյունը և այլն:

Ինչ խոսք, որ գրադարանավարները չպետք է սահմանա-
փակվեն միայն նշված թեմաներով: Այդ գործում գրսևորվե-
լու է գրադարանի աշխատողների քաղաքական պատրաստա-
կանությունը, նրանց նախաձեռնությունը:

Թեմաները ընտրելիս շատ կարևոր է հաշվի առնել ընթեր-
ցողների պահանջները, նրանց ցանկությունները: Հանձնա-
րարվում է թեմատիկ բաց ցուցափեղկերի, գարակների և
ստենդների վրա ցուցադրել կրկնօրինակ գրքերը, որպեսզի
հիմնական ֆոնդերում չխախտվի գրականության սիստեմա-
տիկ դասավորությունը, գրքերի դասավորման կարգը: Այս
աշխատանքում պետք է ներգրավել ակտիվին՝ մասնագետ
ընթերցողներին:

Հասարակական-քաղաքական գրականության ֆոնդը բա-
ցահայտելիս գրադարանավարը ձգտում է բավարարել ըն-
թերցողների բոլոր խմբերի պահանջները:

Հանձնարարվում է ցուցադրվող հասարակական-քաղաքա-
կան գրքերի համար կազմել համառոտ անոտացիաներ:

**ՄԱՐԶՍԻՉՄ-ԼԵՆԻՆԻՉՄԻ ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐԻ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊՐՈՊԱԳԱՆԴԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ**

Մարքսիզմ-լենինիզմի հիմնադիրների աշխատությունների պրոպագանդայի ընթացքում անհրաժեշտ է ղեկավարվել գաղափարական աշխատանքների վերաբերյալ Սովետական Միության Կոմունիստական պարտիայի որոշումներով: ՍՄԿՊ Կենտկոմի 1963 թ. հունիսյան սլենումի որոշման մեջ ասված է, որ «Մասսաներին կոմունիզմի ողով զաստիարակելու հիմքը կազմում են Կ. Մարքսի, Ֆ. էնգելսի և Վ. Ի. Լենինի անմահ ստեղծագործությունները, ՍՄԿՊ ծրագիրը, մեր պարտիայի փաստաթղթերը»:

Պարտիան պահանջում է որպեսզի մարքսիզմ-լենինիզմի տեսության պրոպագանդան զրազարաններում սերտորեն կապվի կոմունիստական շինարարության պրակտիկ խնդիրների հետ և այն նպաստի կոմունիզմի նյութա-տեխնիկական բաղադրի ստեղծման հետ կապված կենսական հարցերի լուծմանը:

Մարքսիզմ-լենինիզմի հիմնադիրների աշխատությունների ուսումնասիրումը օգնում է խոր կերպով հասկանալ հասարակության զարգացման օրենքները, ափիլի պարզ տեսնել հեռանկարները, սովետական մարդկանց մեջ ամրապնդել հավատը զեսլի կոմունիզմի հաղթանակը:

Գրադարանավարները կարող են լայնորեն օգտագործել գրքի ցուցադրական և բանավոր պրոպագանդայի փորձված ձևերը՝ գրքային ցուցահանդեսները, գրադարանային պլակատները, թեմատիկ բաց գրադարակները, պատկերազարդ ալբոմ-

ները, գրքի տեսութունները, թեմատիկ երեկոները, զրույցները և այլն:

Մարքսիզմ-լենինիզմի հիմնադիրների կյանքի ու ուսույց-ցիոն գործունեությանը նվիրված մասսայական միջոցառումներ կարելի է կազմակերպել հետևյալ թեմաների վերաբերյալ.

Գիտական կոմունիզմի հիմնադիրներ Կ. Մարքսի և Ֆ. էնգելսի կյանքն ու գործունեությունը:

Մեծ և սրտառու բարեկամություն (էջեր Կ. Մարքսի և Ֆ. էնգելսի կյանքից):

Վ. Ի. Լենինը Մարքսի և մարքսիզմի մասին:

Մարքսիզմ-լենինիզմի գաղափարներն ապրում ու հաղթանակում են:

Ինչ կարգալ Կ. Մարքսի և Ֆ. էնգելսի մասին:

Ինչ կարգալ Վ. Ի. Լենինի մասին:

Վ. Ի. Լենինը — Կոմունիստական պարտիայի և սովետական պետության հիմնադիր ու ղեկավար:

Լենինը և հայ ժողովրդի ազատագրումը:

Լենինիզմը կոմունիզմի հաղթանակի համար մղվող պայքարի մեծ գորշն է:

Լենինիզմի ուղիով զեսլի կոմունիզմ:

Անհրաժեշտ է զրազարանում ունենալ մեթոդական պլակատներ, որոնք ցույց կտան մարքսիզմ-լենինիզմի հիմնադիրների առանձին աշխատությունների ուսումնասիրման հաջորդականությունը, ինչպես օրինակ՝

Ինչպես ուսումնասիրել ՍՄԿՊ ծրագիրը:

Օգնություն Կ. Մարքսի և Ֆ. էնգելսի աշխատություններն ուսումնասիրողներին:

Օգնություն Վ. Ի. Լենինի աշխատություններն ուսումնասիրողներին:

Ինչպես ուսումնասիրել և կոնսպեկտավորել գիրքը և այլն:

Գրադարանավարներին օգնելու նպատակով ստորև նշենք Մարքսի, էնգելսի և Լենինի կյանքի ու ուսույցի գործունեության մասին մի քանի կարևոր հրատարակություններ:

ԿԱՐԼ ՄԱՐՔՍԻ ՄԱՍԻՆ

Էնգելս Ֆ. Կարլ Մարքս: Եր., Հայպետհրատ, 1955. 27 էջ:

Լենին Վ. Ի. Կարլ Մարքս: (Համառոտ կենսագրական ուրվագիծ մարքսիզմի շարադրանքով): Եր., Հայպետհրատ, 1957. 51 էջ:

Լենին Վ. Ի. Մարքս, էնգելս, մարքսիզմ: Եր., Հայպետհրատ, 1950. 654 էջ:

Լենին Վ. Ի. Կարլ Մարքս և Ֆրիդրիխ էնգելս: Եր., Պետհրատ, քաղաքակ. հրատ., 1939. 70 էջ:

Լենին Վ. Ի. Մարքսիզմի պատմական զարգացման մի քանի առանձնահատկությունների մասին: Կարլ Մարքսի ուսմունքի պատմական բախտը: Մարքսիզմի հրեք աղբյուրներն ու բաղկացուցիչ մասերը: Եր., Հայպետհրատ, 1957. 25 էջ:

Հիշողություններ Մարքսի և էնգելսի մասին: Եր., Հայպետհրատ, 1958. 465 էջ: (ՍՄԿՊ Կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտ):

Մերինգ Ֆրանց: Կարլ Մարքս: Նրա կյանքի պատմությունը: Եր., Հայպետհրատ, 1961. 839 էջ:

Սովետական Միության Կոմունիստական պարտիայի պատմություն: Եր., Հայպետհրատ, 1963. 938 էջ:

Սովետական Միության Կոմունիստական պարտիայի ծրագիր: Եր., Հայպետհրատ, 1961. 174 էջ:

Վիլզոպ Լ. Ն. և Սուխոտին Յա. Լ. Մեծ և սրտառուչ բարեկամություն: Եր., Հայպետհրատ, 1959. 218 էջ:

Քառամյան Հ. Գ. Կարլ Մարքսը և իր երեխաները: Եր., Հայպետհրատ, 1959. 147 էջ:

ՖՐԻԳՐԻԵ ԷՆԳԵԼՍԻ ՄԱՍԻՆ

Լենին Վ. Ի. Մարքս, էնգելս, մարքսիզմ: Եր., Հայպետհրատ, 1950. 654 էջ:

Լենին Վ. Ի. Ֆրիդրիխ էնգելս: Եր., Հայպետհրատ, 1954. 17 էջ:

Հիշողություններ Մարքսի և էնգելսի մասին: Եր., Հայպետհրատ, 1958. 465 էջ:

Ստեպանովա Ն. Ա. Ֆրիդրիխ էնգելս: (Կյանքն ու գործունեությունը): Եր., Հայպետհրատ, 1960. 364 էջ:

Վիլզոպ Լ. Ն. և Սուխոտին Յա. Լ. Մեծ և սրտառուչ բարեկամություն: (էջեր Կարլ Մարքսի և Ֆրիդրիխ էնգելսի կյանքից): Եր., Հայպետհրատ, 1959. 218 էջ:

Վ. Ի. ԼԵՆԻՆԻ ՄԱՍԻՆ

Վ. Ի. Լենին: Կենսագրություն: Եր., Հայպետհրատ, 1961. 790 էջ:

Հիշողություններ Վլադիմիր Իլյիչ Լենինի մասին: Հտ. 1—3, Եր., Հայպետհրատ, 1957—1962. (ՍՄԿՊ Կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալ): Հառազատների հիշողությունները Վ. Ի. Լենինի մասին: Եր., Հայպետհրատ, 1956. 247 էջ:

Յոնչ-Բոուկի Վ. Վլադիմիր Իլյիչը ընտանիքում: «Հիշողություններ Վլադիմիր Իլյիչ Լենինի մասին» գրքում: Հտ. 1, Եր., Հայպետհրատ, 1957. էջ 625—628:

Գիլ Ս. Կ. Վեց տարի Վ. Ի. Լենինի հետ. Վ. Ի. Լենինի անձնական շոֆերի հիշողությունները: Եր., Հայպետհրատ, 1958. 126 էջ:

Գուրկի Մ. Վ. Ի. Լենին: (Հիշողություններ): Եր., Հայպետհրատ, 1960. 56 էջ:

Լուևաչարսկի Ա. Վ. Պատմվածքներ Լենինի մասին: Եր., Հայպետհրատ, 1960. 40 էջ:

Կոլոնտայ Ա. Մ. Հուշեր Իլյիչի մասին: Եր., Հայպետհրատ, 1960. 10 էջ:

Կուլաքսկայա Ն. Կ. Վ. Ի. Լենինի մասին հիշողությունները: 1893—1898 թթ.:— Աքսորում 1898—1901 թթ.: «Հիշողություններ Վլադիմիր Իլյիչ Լենինի մասին» գրքում: Հտ. 1: Եր., Հայպետհրատ, 1957. էջ 94—126:

Կրուսյակայա Ն. Կ. Լենինը որպես պրոպագանդիստ և ագիտատոր: Եր., Հայպետհրատ, 1957. 39 էջ:

Մյասնիկյան Ա. Ֆ. Իմ հանդիպումները ընկեր Լենինի հետ: Եր., Հայպետհրատ, 1957. 23 էջ:

Մյասնիկյան Ա. Ֆ. Իմ հանդիպումները Լենինի հետ: Եր., Հայպետհրատ, 1960. 15 էջ:

Ուլյանովա Ա. Ի. Իլյիշի մանկական և դպրոցական տարիները: Եր., Հայպետհրատ, 1953. 41 էջ:

Ցեակին Կ. Հիշողություններ Լենինի մասին: Եր., Հայպետհրատ, 1955. 55 էջ:

Վոլին Վ. Մ. Վ. Ի. Լենինը Պոլոտյեում: 1870—1893: Եր., Հայպետհրատ, 1956. 139 էջ:

Ֆոտիևա Լ. Ա. Ինչպես էր աշխատում Վ. Ի. Լենինը: Եր., Հայկ. ՍՍՌ քաղ. և գիտ. գիտելիքների տարածման ընկ-թյուն, 1957. 36 էջ:

Ֆոտիևա Լ. Ա. «Հիշողություններ Վլադիմիր Իլյիշ Լենինի մասին» գրքում, հտ. 2, Եր., Հայպետհրատ, 1958. էջ 254—277:

Վ. Ի. ԼԵՆԻՆԻ ԵՐԿԵՐԻ ԵՎ ՆՐԱ ԿՅԱՆՔԻ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԱՆ

Հասարակական-քաղաքական գրականության պրոպագանդան գործում գրադարանավարներն առանձնահատուկ տեղ պետք է տան կոմունիստական պարտիայի և աշխարհում առաջին Սովետական Սոցիալիստական պետության ստեղծող Վ. Ի. Լենինի աշխատությունների, նրա մասին եղած գրականության պրոպագանդային:

Սովետական Միության Կոմունիստական պարտիայի 22-րդ համագումարի, պարտիայի Կենտրոնական կոմիտեի պլենումների որոշումները, ՍՍՄԹ ժողովրդական տնտեսության զարգացման հոյակապ խնդիրները, — հազեցված են մեր երկրում կոմունիզմի կառուցման լենինյան գաղափարներով:

Վ. Ի. Լենինի աշխատությունների խորը և բազմակողմանի ուսումնասիրումը ընթերցողների կողմից հնարավորություն կտա ավելի լավ ըմբռնելու պարտիայի կողմից ձեռնարկված միջոցառումները և դրանք հաջողությամբ կենսագործելու կյանքում:

Վ. Ի. Լենինի աշխատությունների պրոպագանդան գրադարաններում անհրաժեշտ է տանել սխտեմատիկորեն ու պլանային:

Ամենից առաջ պրադարանավարը պետք է ստուգի, թե իր Ֆոնդում ինչպես են ներկայացված Լենինի աշխատությունները, նրա երկերի ժողովածուները, նրա մասին եղած գրականությունը և մատենագիտական ցանկերը:

Վ. Ի. Լենինի աշխատությունները հաջողությամբ պրոպագ-

47800-64



զանգեկու համար նախ և առաջ անհրաժեշտ է, որպեսզի զրազարանավարներն իրենք ուսումնասիրեն Վ. Ի. Լենինի երկերը:

Ք Վ. Ի. Լենինի աշխատությունների ուսումնասիրման հիմնական մեթոդը անհատական աշխատանքն է: Ընթերցանության և Լենինի աշխատությունների ուսումնասիրման համար անհրաժեշտ է ամենից առաջ սովորել Լենինից: Վլադիմիր Իլյիչը կարողանում էր հարցը ուսումնասիրել խորը կերպով, իր բոլոր կողմերով: Նա նշումներ էր անում, զրի առնում առանձին քաղվածքներ, կազմում կոնսպեկտներ:

4. Մարքսի և Ֆ. էնգելսի աշխատությունների ուսումնասիրման ժամանակ Լենինը հատուկ ուշադրություն էր դարձնում սխառեմատիկ և սլանային ընթերցանության վրա:

Վլադիմիր Իլյիչը «Պետության մասին» 1919 թ. Սվերդլովի համալսարանում ուսանողության համար կարդացված դասախոսության ժամանակ էնգելսի «Ընտանիքի, մասնավոր սեփականության և սեռության ծագումը» աշխատությունը ուսումնասիրման հանձնարարելիս ասել է. «Չպետք է շփոթվել, եթե այդ աշխատությունը կարդալիս միանգամից չհասկանաք: Դա զրեթե երբեք ոչ մի մարդու հետ չի պատահում: Սակայն հետադադում վերադառնալով նրան, երբ հետաքրքրություն կարթնանա, ձեզ կհաջողվի հասկանալ նրա գերակշռող մասը, եթե ոչ բոլորն ամբողջությամբ»¹:

Վ. Ի. Լենինը խորհուրդ էր տալիս՝ «նշել անհասկանալի կամ մութ տեղերը, զրանց երկրորդ, երրորդ և չորրորդ անգամ անդրադառնալու համար, որպեսզի այն, ինչ մնացել է անհասկանալի, լրացվի և էլ ավելի պարզվի այնուհետև, հետագայում, ինչպես ընթերցանությամբ, այնպես էլ առանձին դասախոսությունների ու գրությունների միջոցով... Ինչ անհասկանալի է առաջին անգամ կարդալիս, հասկանալի կդառնա կրկնակի ընթերցանության ղեկավարում...»²

¹ Վ. Ի. Լենին, Երկեր, հտ. 29, էջ 582:

² Վ. Ի. Լենին, Երկեր, հտ. 29, էջ 578—579:

Լենինի այս խորհուրդները, որ վերաբերում էր առաջին անգամ մարքսիստական գրականությունն ուսումնասիրողներին, կարող են օգտավետ լինել հենց իրեն՝ Վլադիմիր Իլյիչի երկերը ուսումնասիրողներին:

Ք թե ինչպես պետք է ուսումնասիրել Լենինի երկերը շատ արժեքավոր խորհուրդներ է տալիս Ն. Կ. Կրուպսկայան իր հետևյալ հոդվածներում՝ «Այն հարցի առթիվ, րե ինչպես պետք է կարդալ Լենինին»¹, և «Վ. Ի. Լենինի երկերի ուսումնասիրության հարցի շուրջը»²:

Այս առթիվ Ն. Կ. Կրուպսկայան գրում է՝ «Ընթերցողը Լենինի՝ որևէ պատճառով իրեն հետաքրքրող այս կամ այն հոդվածը կարդալիս պետք է նախապես ծանոթ լինի մի շարք հարցերի: Նա ամենից առաջ պետք է ուշադրության առնի, թե ե՞րբ է գրվել հոդվածը (թվականը, ամիսը), լեզու, անլեզու ժուռնալի կամ թերթի համար (այս վերջինը ազդում է լեզվի և թեմայի մեկնաբանության բնույթի վրա): Ապա անհրաժեշտ է, որ ընթերցողը հասկանա, թե ինչու հատկապես սույն պահին է Լենինը հոդվածը գրել տվյալ թեմայով, ո՞ւմ է դիմում հոդվածում և ի՞նչ նպատակ է հետապնդում այդ հոդվածով: Որպեսզի ընթերցողը ի վիճակի լինի պատասխանել այդ հարցերին, պետք է անպայման ուսումնասիրի լուրջաբանչուր հատորի վերջում ղետեղված «Իրադարձությունների տարեգրության» այն մասը, որ վերաբերում է տվյալ ժամանակամիջոցին:

Ինչ վերաբերում է երկրորդ թեմային՝ թե ինչպես ուսումնասիրել այս կամ այն հարցի լուսաբանումը Լենինի կողմից, ապա այստեղ անհրաժեշտ է վերցնել հոդվածներ, որոնք այդ հարցը մեկնաբանում են դանազան շրջաններում և այդ հոդվածները համեմատել, ցույց տալ, թե մեկ հոդվածը մյուսից ինչո՞վ է տարբերվում, թե ի՞նչ նոր տեսակետից է նրան մոտենում Լենինը, ինչպես նաև այն, թե ինչո՞ւ այդ հարցը

¹ Ն. Կ. Կրուպսկայա: Գրադարանային գործի մասին: Ժողովածու Եր., 1961, էջ 594—597:

² Ն. Կ. Կրուպսկայա: Գրադարանային գործի մասին: Ժողովածու Եր., 1961, էջ 598—605:

նախկինում նա շի գրեւ, այլ դնում է հենց տվյալ պահին...
անհրաժեշտ է, որպէսզի ընթերցողին ցույց տրվի, թե ինչ է
նշանակում հարցը վերցնել իր վարձացման ընթացքում, իր
բոլոր կապերով ու միջնորդավորումներով:

Երրորդ հարցն էլ այն է, թե ինչպե՞ս պետք է այս կամ այն
դարաշրջանն ուսումնասիրել ըստ Լենինի երկերի: Այստեղ
դարձյալ պետք է գիմել «Իրադարձությունների տարեգրու-
թյանը» և որեւէ դարաշրջանի ֆոնի վրա ցույց տալ, թե
Լենինի այդ ժամանակաշրջանի հոգիվածների ցուցակը ի՞նչ
հարցեր կարող է պարզել, ի՞նչ հարցեր են նրան առանձնա-
պես հուզել տվյալ դարաշրջանում, ո՞ր հարցերն է նա
առանձնապէս շեշտել, ինչպէս է նա այդ բոլոր հարցերն իրար
հետ կապակցել, ի՞նչ տեսակետից է նրանց մտակցել...»:

Այսպիսով կարելի է նկատել, որ Վ. Ի. Լենինի յուրա-
քանչյուր աշխատությունը, նրա յուրաքանչյուր ճառը, հոդ-
վածքը, անխղճիւրքեն կասկած են եղել ընթացիկ իրադարձու-
թյունների, պարտիայի գործունեության, բանվոր դասակար-
գի միջազգային պայքարի, Լենինի գործունեության հետ:

Վ. Ի. Լենինի աշխատությունները խորը և ստեղծագործա-
բար ուսումնասիրելիս կարևոր է իմանալ, թե պատմական
ինչ իրադրությունների մեջ է առաջ քաշվել և գործել այս կամ
այն տեսական դրույթը, ինչ կոնկրետ պայմանների է վերա-
բերում այս կամ այն ընդհանրացումը կամ հետեւությունը, որ
Լենինն անում է իր աշխատություններում: Այդ նպատակի
համար անհրաժեշտ է օգտագործել ՍՄԿՊ պատմության նոր
դասագիրքը, Լենինի երկերի հատորներում զետեղված «Կյան-
քի և գործունեության տարիթվերը», Լենինի կենսագրությու-
նը, Վ. Ի. Լենինի մասին այլ գրքեր:

Վ. Ի. Լենինի աշխատություններն ուսումնասիրելիս գրա-
դարանավարներին և ընթերցողներին զգալի օգնություն կա-
րող են ցույց տալ «Վ. Ի. Լենինի աշխատությունների ու նրա
մասին եղած գրականության պրոպագանդան գրադարաննե-
րում» մեթոդական և բիբլիոգրաֆիական նյութերի ժողովա-

ծուն»¹ և Հ. Կ. Կոստիկյանի «Հասարակական-քաղաքական
գրականության մատենագիտությունը»² ձեռնարկը:

Վ. Ի. Լենինի երկերը ուսումնասիրելիս, երբ պարզ է դա-
նում, թե տվյալ աշխատության մեջ Լենինը ինչ գաղափար-
ներ է առաջ քաշում և ինչ հետեւություններ է անում, գրադա-
րանավարը կատարում է առանձին գրառումներ, որոնցում
համառոտակի շարադրում է տվյալ աշխատության բովանդա-
կությունը, նրա նշանակությունը մեր օրերում: Ինչ խոսք, որ
այդ հանդամանքը շատ կարևոր է գրադարանային աշխա-
տողի համար, քանի որ նա պետք է անցկացնի դրույցներ
ընթերցողների տարբեր խմբերի հետ, կազմի գրականությամբ
հանձնարարական ցանկեր, կազմակերպի գրքի տեսություն-
ներ և գրքային ցուցահանդեսներ: Այդպիսի գրառումները
հնարավորություն են տալիս մի որոշ ժամանակից հետո ըն-
թերցածը վերականգնել հիշողության մեջ:

Վ. Ի. Լենինի աշխատություններն ուսումնասիրողներին
սկզբից անհրաժեշտ է հանձնարարել Լենինի ոչ մեծ և հան-
րամատչելի երկերը, ինչպէս օրինակ՝ «Աշխատավոր և շահա-
գործվող ժողովրդի իրավունքների դեկլարացիա», «Աշխա-
տավորուհիների միջազգային օրը», «Ինչ է Սովետական իշ-
խանությունը», «Ինչպէս կազմակերպել մրցությունը», «Զե-
կուցում շաբաթօրյակների մասին», «Երկտասարդության
միությունների խնդիրները», «Մեծ նախաձեռնություն», «Կոո-
պերացիայի մասին», «Էջեր օրագրից», «Պետություն և ու-
վելուցիա», «Սովետական իշխանության հերթական խնդիր-
ները», «Մեր ուսուցիչայի մասին», «Լավ է բիշ, բայց լավ» և
այլ աշխատություններ:

¹ Վ. Ի. Լենինի աշխատությունների և նրա մասին եղած գրականու-
թյան պրոպագանդան գրադարաններում (Մեթոդ. և բիբլ. նյութեր
Վ. Ի. Լենինի ծննդյան 90-ամյակի առթիվ): Եր., 1960. 86 էջ: (Հայկ. ՍՍՌ
ԱԷ. Մյասնիկյանի անվ. պետ. ուսուց. գր-ն):

² Հ. Կ. Կոստիկյան, Հասարակական-քաղաքական գրականության մա-
տենագիտություն: Ուսումն. ձեռնարկ: Եր., 1964. 361 էջ: (Հայկ. ՍՍՌ կուլտ.
մինիստր. կուլտ. լուս. վարչություն):

Լենինի մի շարք աշխատություններում լուսաբանվում են արդիական նշանակություն ունեցող հարցեր ինչպես օրինակ՝ Կամունիստական հասարակության Երկու փուլերի մասին («Պետություն և ռեւոլյուցիա»), Աշխատանքի եկամտամբ կոմունիստական վերաբերմունքի և արտադրականության բարձրացման մասին («Ինչպես կազմակերպել մրցությունը», «Մեծ նախաձեռնություն»), Երկրի ծանր ինդուստրիայի և էլեկտրիֆիկացիայի զարգացման վնասված և նշանակության մասին («Մեր արտաքին ու ներքին դրությունը և պարտիայի խնդիրները», «Միասնական տնտեսական պլանի մասին»), Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման մասին («Կոոպերացիայի մասին», «Ճառ հողային բաժինների, շքավորության կոմիտեների և կոմունանների համառուսաստանյան առաջին համագումարում 1918 թ.»), Կուլտուրական ռևոլյուցիայի իրագործման մասին («Մեր ռեւոլյուցիայի մասին», «Երիտասարդության միությունների խնդիրները», «էջեր օրագրից», «Լավ է քիչ, բայց լավ):

Այդ հարցերի վերաբերյալ դրադարանավարները կարող են կազմակերպել գրքի տեսություններ, թեմատիկ ցուցահանդեսներ և դրույցներ:

Վ Գրադարանային աշխատողները պետք է լավ ծանոթ լինեն Վ. Ի. Լենինի այդ երկերի հետ, ինչպես նաև նրա աշխատությունների մի շարք թեմատիկ ժողովածուների հետ, որոնք լայն տարածում ունեն ընթերցողների մեջ և սիրով ընթերցվում են վերջիններիս կողմից:

Որպես օրինակ նշենք դրանցից մի քանիսը. Լենինը «Ազգային և աղդային-գաղութային հարցի մասին», «Բանվոր դասակարգի և գյուղացիության զաշինքի մասին», «Գրակալության մասին», «Երիտասարդության մասին», «Երկրի ծանր արդունաբերության և էլեկտրիֆիկացիայի զարգացման մասին», «Կուլտուրայի և արվեստի մասին», «Կոմունիստական դաստիարակության մասին», «Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռեւոլյուցիայի մասին», «Պարտիայի միասնության մասին», «Պրոպագանդայի և ագիտացիայի մասին», «Պար-

տիական շինարարության մասին», «Սովետական պետական ասպարատի աշխատանքի մասին» և այլն: Այս թեմատիկ ժողովածուները մեծ օգնություն կարող են ցույց տալ պրոպագանդիստներին, պարտիական և քաղաքական լուսավորության ցանցի ունկնդիրներին, Մարքս-Լենինյան տեսությունն ինքնուրույն ուսումնասիրողներին, ուսանողներին:

Վ Գրադարան են գալիս տարբեր պատրաստականության ու տարբեր սահմանների տեր մարդիկ, սակայն նրանց բոլորին էլ հետաքրքրում է մարքսիզմ-Լենինիզմի հիմնադիրների աշխատությունները, որոնցում կարելի է գտնել բազմաթիվ հարցերի պատասխաններ: Գրադարանավարը պետք է լինի Լենինյան դադափարների, Վ. Ի. Լենինի երկերի ակտիվ պրոպագանդիստն ու ագիտատորը:

Լենինի երկերը, թեմատիկ ժողովածուները, առանձին աշխատությունները լայնորեն օգտագործվում են ընթերցողների կողմից: Բանվորը և կոլտնտեսականը, գիտնականը և ինժեները, ագիտատորն ու դասախոսը, պարտիական ու պետական ղեկավար աշխատողը, արտադրության առաջավորը ընթերցում և վերընթերցում են Վ. Ի. Լենինի աշխատությունները:

Վ Վ. Ի. Լենինի աշխատությունների պրոպագանդայի ընթացքում պետք է ընթերցողների հետ անհատական զրույցներ տանել գրքերի մասին: Եթե ընթերցողը բավականաչափ պատրաստված է, ապա նրան Վ. Ի. Լենինի սրևէ աշխատություն հանձնարարելիս անհրաժեշտ է նշել, թե պատմական որ ժամանակաշրջանի և ինչ կապակցությամբ է նա գրվել, ինչ նշանակություն է ունեցել: Նման ընթերցողին գրադարանավարը կարող է հանձնարարել նաև լրացուցիչ գրականություն՝ գրքեր, բրոշյուրներ, հոդվածներ Լենինի ավելի աշխատության մասին:

Ցածր պատրաստականություն ունեցող ընթերցողին սկզբում կարելի է հանձնարարել մեկ-երկու հետաքրքիր գրքեր Իլյիչի կյանքի մասին, ինչպես օրինակ՝ Ս. Գիլի «Վեցը տարի Վ. Ի. Լենինի հետ», Վ. Բոնչ-Բրուսիչի «Վ. Ի. Լենինը Պետրո-

գրադոմ և Մոսկվայում», Ալ. Մյասնիկյանի «Իմ հանդիպումները ընկեր Լենինի հետ», «Հարազատների հիշողությունները Վ. Ի. Լենինի մասին» և այլն: Հետագայում կարելի է խորհուրդ տալ կարդալու Վ. Ի. Լենինի աշխատությունները: Վ. Ի. Լենինի որոշ աշխատությունների հանձնարարումը կարելի է հաջողությամբ կապակցել մեր երկրի ընթացիկ իրադարձությունների և կյանքի հետ, ինչպես նաև նշանավոր ու հիշարժան տարեթվերի հետ: Օրինակ՝ Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռեվոլյուցիայի հերթական տարեդարձների նախապատրաստման և սոնակատարության անցկացման ժամանակաշրջանում ընթերցողներին կարելի է հանձնարարել Վ. Ի. Լենինի հետևյալ աշխատությունները՝ «Ի՞նչ է Սովետական իշխանությունը», «Հոկտեմբերյան ռեվոլյուցիայի շրջամտյա տարեդարձի առթիվ» և այլն: Կանանց միջազգային օրվա՝ մարտի 8-ի առթիվ ընթերցող կանանց կարելի է ծանոթացնել Վ. Ի. Լենինի «Սովետական իշխանությունը և կնոջ դրությունը», «Աշխատավորուհիների միջազգային օրը» աշխատությունների հետ: Լենինյան օրերին հանձնարարվում է ընթերցողներին ծանոթացնել Վ. Ի. Լենինի «Կոոպերացիայի մասին», «Էօեր օրագրից», «Լավ է քիչ, բայց լավ» հոդվածների հետ, որոնք բովանդակում են Վ. Ի. Լենինի պատգամները:

Վ. Ի. Լենինի աշխատությունների պրոպագանդան հետ միասին գրադարանները պետք է ընթերցողներին ծանոթացնեն մեծ առաջնորդի կյանքի ու դործունեության վերաբերյալ գրականության հետ:

Ընթերցողների մոտ մեծ մասսայականություն են վայելում գրքի պրոպագանդայի այնպիսի տարածված ձևեր ինչպիսիք են՝ բանավոր ամսագրերը, հարց ու պատասխանի երեկոները, «Լենինյան ընթերցումներ»-ը, ցուցահանդեսները, պլակատները, թեմատիկ բաց գրադարանները և հուշերի երեկոները:

«Լենինյան ընթերցումներ»-ի օրերին գրադարանը կազմակերպում է Լենինի մասին, նրա ուսմունքի մասին մի շարք դասախոսություններ, զրույց-ընթերցանություններ:

Բարձրաձայն ընթերցումները կազմակերպվում են ընթեր-

ցողների ոչ մեծ խմբերի համար, այն մարդկանց համար, որոնք դեռ չեն ուսումնասիրել Լենինի աշխատությունները և դեռևս պատրաստ չեն ինքնուրույն կերպով ձեռնամուխ լինելու գրան: Այդպիսի ընթերցումներ կարելի է կազմակերպել գրադարանում, շրջիկներում, բանվորական հանրակացարաններում, կուլտեստային բրիգադներում, ֆերմաներում, շինարարությունում և այլ վայրերում: Բարձրաձայն ընթերցումներն անց են կացնում ինչպես իրենք գրադարանավարները, այնպես էլ գրադարանի ակտիվիստները, ագիտատորները, պրոպագանդիստները: Այդպիսի ընթերցումների ժամանակ օգտագործվում են պլակատներ, ալբոմներ, ֆոտոնկարներ և այլ ցուցադրական նյութեր:

«Լենինյան ընթերցումներ»-ից հետո կարելի է ցուցադրել գեղարվեստական կինոնկար Լենինի մասին: Այդ կոմպլեքս միջոցառումներն անցկացնելիս պետք է ներգրավել ակումբի, կուլտուրայի տան աշխատողներին, ինչպես նաև ինքնագործ խմբերին ու առանձին կատարողներին:

Բարձրաձայն ընթերցումը սովորաբար սկսվում է ընթերցավարի նախաբանով, որի մեջ ունկնդիրներին համառոտակի տեղեկություն է տրվում, թե սվլյալ աշխատությունը երբ է գրվել ու ինչ նպատակով, որն է նրա հիմնական բովանդակությունն ու նշանակությունը: Լենինի այս կամ այն աշխատության ընթերցումից հետո անց է կացվում զրույց սվլյալ հարցի շուրջը, որի ընթացքում լսողներին անհրաժեշտ է ցույց տալ, թե ինչպես պետք է լենինյան մտքերով ու գաղափարներով ողեշնչված, պայքարել մեր այսօրվա խնդիրների կինսագործման, կոմունիստական հասարակության կառուցման համար: Այդպիսի զրույցը անկասկած զգալի օգնություն ցույց կտա ունկնդիրներին ավելի խորն ըմբռնելու ընթերցված նյութը: Խորհուրդ է տրվում զրույցներից հետո անցկացնել սվլյալ աշխատության կամ թեմայի վերաբերյալ գրականության համառոտ տեսություն, որը կբարձրացնի լսողների մեջ հետաքրքրությունը և ընթերցանության պահանջ կառուցանի: Լենինյան ընթերցումը ամբողջապես վերցրած պետք է

տևի 40—50 րոպեից ոչ ավել: Ընթերցումը հետաքրքիր է գառնում, եթե այն ուղեկցվում է դիաֆիլմերի դիտումներով և ղեղարվեստական մասով:

Վերցնենք լենինյան ընթերցումներից մեկը՝ «Աշխատել կոմունիստաբար, ինչպես սովորեցնում է Վ. Ի. Լենինը» թեմայով: Այդ թեմայի վերաբերյալ կարելի է ընթերցել Վ. Ի. Լենինի «Մեծ նախաձեռնություն», «Ինչպես կազմակերպել մրցությունը», «Դարավոր կացութաձևի խորտակումից դեպի նորի ստեղծումը», «Մոսկվա—Կազան երկաթուղու առաջին շաբաթօրյակից դեպի համառուսաստանյան մայրամասնական շաբաթօրյակը», «Երիտասարդության միությունների խնդիրները», «Սովետական իշխանության հերթական խընդիրները» աշխատություններից որևէ մեկը:

Ընթերցումներ անցկացնելիս կարելի է օգտագործել նաև գրքեր, բրոշյուրներ կոմունիստական աշխատանքի առաջավորների մասին: Նախքան զրույց անցկացնելը անհրաժեշտ է կազմել նրա պլանը: Այսպես օրինակ «Մեծ նախաձեռնություն» գրքույկի շուրջը զրույցի պլանը իր մեջ կարող է ընդգրկել հետևյալ հարցերը՝

1. Ծ՞րբ առաջացավ այդ մեծ նախաձեռնությունը և ինչպե՞ս է Վ. Ի. Լենինը ղեկավարում կոմունիստական շաբաթօրյակների պատմական նշանակությունը:

2. Ո՞րն է սովետական կարծիքը և ամենազլխավորը նոր հասարակարգի համար:

3. Փաստեր, օրինակներ կոլտնտեսություններից, արտադրական օբյեկտներից աշխատանքի արտադրողականության բարձրացման վերաբերյալ:

Գրադարանը պատրաստում է պլանատ՝ «Մեծ նախաձեռնությունից դեպի կոմունիստական աշխատանքի բրիգադաները» թեմայով, որը ձևավորվում է զրադարանի ակտիվի օգնությամբ:

Ընթերցումից հետո, ինչպես նշեցինք, սկսվում է զրույցը: Ընթերցումարը պետք է կարողանա հմտորեն զրույցը կապել

աշտարվա հրատապ հարցերի հետ, բերի կոնկրետ փաստեր ավելի հիմնարկ-ձեռնարկության աշխատանքից:

Զրույցի անմիջական արդյունքը պետք է արտահայտվի տվյալ թեմայի վերաբերյալ գրքերի պահանջով:

Վ. Ի. Լենինի աշխատությունների բարձրաձայն ընթերցումները նպատակահարմար է կազմակերպել ըստ ընթերցողական խմբերի:

Լենինյան ընթերցումներ կարելի է անցկացնել հետևյալ թեմաների շուրջը.

Վ. Ի. Լենինի մանկության և պատանեկության տարիները և ռևոլյուցիոն գործունեության սկիզբը:

Վ. Ի. Լենինը որպես Կոմունիստական պարտիայի կազմակերպիչ և առաջնորդ, աշխարհում առաջին սոցիալիստական պետության հիմնադիր ու ղեկավար:

Վ. Ի. Լենինը Հոկտեմբերի առաջնորդ:

Վ. Ի. Լենինը աշխատավորների ուսուցիչ և բարեկամ, Մարքսի և էնգելսի գործի մեծ շարունակող:

Լենինի դերը կոմունիզմի հաղթական գրոշն է:

Լենինը սոցիալիզմի և կոմունիզմի մասին:

Կոմունիստական պարտիայի լենինյան միասնությունը: Լենինը և հայ ժողովրդի ազատագրումը:

Լենինի դերը ամբողջ աշխարհի աշխատավորության խաղաղության, դեմոկրատիայի և սոցիալիզմի համար մղվող պայքարի՝ գրոշն է:

Կոմունիզմի կառուցման լենինյան պլանը գործողության մեջ:

Վ. Ի. Լենինի կյանքը և գործունեությունը ոգեշնչող օրինակ է երիտասարդության համար:

ՍՍՍՐ-ում սոցիալիզմի ու կոմունիզմի կառուցման լենինյան պլանը և ՍՄԿՊ-ի պայքարը նրա կենսագործման համար:

Լենինյան կոսպերատիվ պլանը և Կոմունիստական պարտիայի ձեռնարկած միջոցառումները սոցիալիստական գյուղատնտեսության հետագա վերելքի համար:

Վ. Ի. Լենինը աշխատանքի արտադրողականության բարձրացման և աշխատանքի նկատմամբ կոմունիստական վերաբերմունքի մասին և այլն:

Խորհուրդ է արվում Լենինի աշխատությունները պրոպագանդելու համար ավելի լայնորեն կիրառել մասսայական աշխատանքի բովանդակալից ու փորձված ձևերից մեկը՝ ընթերցողական կոնֆերանսները:

Ընթերցողական կոնֆերանսը կարող է լինել թեմատիկ, ինչպես օրինակ՝ «Վ. Ի. Լենինի պատգամները երիտասարդությանը», «Վ. Ի. Լենինը կոմունիստական դաստիարակության մասին», «Լենինը պարտիայի միասնության մասին», «Վ. Ի. Լենինը Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռեյուցիայի մասին» և այլն:

Ընթերցողական կոնֆերանսներ կարելի է կազմակերպել նաև Վ. Ի. Լենինի առանձին աշխատությունների վերաբերյալ, օրինակ՝ «Երիտասարդության միությունների խնդիրները», «Մեծ նախաձեռնություն», «Ինչպես կազմակերպել մրցություններ» և այլն: Լենինի աշխատությունների բովանդակությունն այդ կոնֆերանսներում անհրաժեշտ է կապել կյանքի հետ, սովետական մարդկանց աշխատանքային գործունեության հետ, երիտասարդության կողմից Լենինի պատգամների կենսադործման հետ:

Գրադարաններում կազմակերպվում են նաև թեմատիկ երեկոներ նվիրված Վ. Ի. Լենինի աշխատություններին: Այսպես օրինակ՝ «Վ. Ի. Լենինը երիտասարդության մասին» երեկոյի ծրագիրը կարող է բաղկացած լինել ղեկուցումից, երեկոյի թեմայի վերաբերյալ գրականության տեսությունից, հին կոմունիստների ելույթներից, լենինյան հոգվածների ընթերցումներից: Այդ բոլորը կկազմի երեկոյի ծրագրի առաջին մասը: Երկրորդ մասում ընդգրկվում է Վ. Ի. Լենինին նվիրված երկերի գեղարվեստական ընթերցումներ, երաժշտական երկերի և ռեյուցիոն երգերի կատարումներ: Այնուհետև հուշերով կարող են հանդես գալ Հոկտեմբերյան ռեյուցիայի, քաղաքացիական և Հայրենական Մեծ պատերազմների մաս-

նակիցները: Այդ երեկոներում կարող են ելույթ ունենալ նաև արդյունաբերության ու գյուղատնտեսության առաջավորները, կոմունիստական աշխատանքի նշանավոր մարդիկ:

Երիտասարդության համար կարելի է ընտրել բանավոր ամսագիր «Վ. Ի. Լենինի կյանքն ու գործունեությունը որպես ողջընդլ օրինակ երիտասարդության համար» թեմայով: Այստեղ առաջին հերթին անհրաժեշտ է պրոպագանդել առաջնորդի պատանեկության, նրա երիտասարդության տարիների սկզբնական գործունեության մասին եղած գրականությունը, Վ. Ի. Լենինի ճառը կոմերիտմիության 3-րդ համագումարում, ինչպես նաև նյութեր «Լենինը երիտասարդության մասին» թեմատիկ ժողովածուից:

Մեծահասակների համար նախատեսված բանավոր ամսագիրը «Մարդկության մեծագույն հանձնարը» թեմայով, կարող է բաղկացած լինել հետևյալ մասերից.

Վ. Ի. Լենինի ուսմունքի նշանակությունը (ներածական խոսք):

Վ. Ի. Լենինի կյանքն ու գործունեությունը (ղրույց):

Վ. Ի. Լենինը գեղարվեստական գրականության մեջ (գեղարվեստական ընթերցանություն, պատկերներ պիտաներից):

Վ. Ի. Լենինը սոցիալիզմի և կոմունիզմի մասին (առանձին աշխատությունների տեսություն):

Լենինյան պատգամները կենսագործվում են կյանքում (ընթերցողների ելույթներ):

Վ. Ի. Լենինի մասին երգերի կատարումներ գեղարվեստական ինքնագործունեության ուժերով:

Լենինի մասին ֆիլմերի և դիաֆիլմերի ցուցադրում:

Վ. Ի. Լենինի աշխատությունների և նրա մասին եղած գրականության պրոպագանդման լավագույն ձևերից մեկն էլ հանդիսանում է գրական-գեղարվեստական երեկոն: Այն կարելի է կազմակերպել սկզբի կամ կուլտուրայի տան հետ միասին:

Երեկոների թեմաները կարող են տարբեր լինել, ինչպես

օրինակ՝ «Լենինի պայքարը կոմունիստական պարտիայի ստեղծման համար», «Վլադիմիր Իլյիչ Լենինը աշխարհում առաջին սոցիալիստական պետության հիմնադիրն ու ղեկավարն է», «Սշխատել և ապրել այնպես, ինչպես սովորեցրել է մեծ Լենինը», «Լենինի կերպարը գեղարվեստական գրականության մեջ» և այլն:

Նախքան երեկոն, գրադարանավարը պետք է պատրաստի գրքային ցուցահանդես, գրադարանային պլակատներ, գրականությունների բաց ցուցափեղկեր և թեմատիկ գրադարակներ, որոնք կարող են լինել հետևյալ թեմաներով՝ «Լենինի պատգամները կենսագործենք կյանքում», «Կոմունիզմի կառուցման մեծագույն ծրագիրը», «Պարտիան մեզ տանում է դեպի կոմունիզմ», «Խաղաղ գոյակցության լենինյան սկզբունքը» և այլն:

Երեկոյի նախապատրաստման ժամանակաշրջանում նրա պատահաճարմար է կազմակերպել զրույցներ, բարձրաձայն ընթերցանություններ, բաց գրադարակներ՝ Լենինի երկերի ու նրա մասին եղած գրականության շուրջը: Յուրաքանչյուր գրադարան պետք է բազմակողմանիորեն մոտենա երեկոյի ծրագրի մշակմանը, հաշվի առնի իր աշխատանքի պայմաններն ու հնարավորությունները, ունենդիրների կազմը, ինչպես նաև տեղական գեղարվեստական ինքնագործ խմբերի ուժերը:

Սովորաբար երեկոյում ընթերցողները սկզբում լսում են գեկուցում, այնուհետև անց է կացվում Վ. Ի. Լենինի մասին գրականության տեսություն:

Զեկուցողի և երեկոն վարողի ընտրության գործում գրադարանին կօգնի պարտիական կազմակերպությունը և պարտիայի շրջանային կոմիտեն: Գեղարվեստական մասի կազմակերպումը պետք է իր վրա վերցնի ակումբը, կուլտուրայի տունը կամ դպրոցը:

Վ. Ի. Լենինի աշխատությունների պրոպագանդան գործում մեծ դեր կարող են խաղալ նաև գրքային ցուցահանդեսները:

Գրքային ցուցահանդեսներ կարելի է կազմակերպել հետևյալ թեմաների շուրջը՝ «Լենինի գաղափարները ապրում և հազրանակում են», «Լենինիզմը կոմունիզմի համար մղվող պայքարի մեծ դրոշմ է», «ՍՄՄՖ-ում սոցիալիզմի և կոմունիզմի կառուցման լենինյան պլանը», «Վ. Ի. Լենինը որպես ռևոլյուցիոն պարտիայի ստեղծողը», «Վ. Ի. Լենինը Հոկտեմբերյան Սոցիալիստական ՄԼԾ ռևոլյուցիայի առաջնորդ», «Լենինը որպես սոցիալիստական պետության ստեղծողը», «Կոմունիստական հասարակության կառուցման լենինյան պլանը գործողության մեջ», «Ապրել, աշխատել և պայքարել Լենինի պես», «Ամենամարդկայինը մարդկանց մեջ», «Սովորի ապրել և աշխատել կոմունիստաբար», «Լենինի Կատգամները — Երիտասարդությանը», «Լենինը սովետական գեղարվեստական գրականության մեջ», «Լենինը հայ ժողովրդի ազատաբար», «Լենինի կերպարը սովետահայ պոեզիայում» և այլն: Այդ ցուցահանդեսները կօգնեն ընթերցողներին ավելի խորը ուսումնասիրելու Վ. Ի. Լենինի աշխատությունները և նրա մասին եղած գրականությունը:

Վ. Ի. Լենինի աշխատությունները ուսումնասիրողներին օգնելու նպատակով գրադարաններում անհրաժեշտ է կազմել նաև հանձնարարական գրականության մատենադիտական ցուցակներ և թեմատիկ քարտարաններ հետևյալ խորագրերով՝ Ի՞նչ կարգալ Լենինի մասին:

Վ. Ի. Լենինը Հայաստանի մասին:

Ի՞նչ կարգալ կոմունիստական դաստիարակության մասին:

Ի՞նչ կարգալ երիտասարդության և կոմերիտմիության մասին:

Օգնություն Վ. Ի. Լենինի աշխատություններն ուսումնասիրողներին և այլն: ✓

Հասկանալի է, որ գրադարանավարները շատ քիչ են սահմանափակվեն Վ. Ի. Լենինի աշխատությունների և նրա մասին եղած գրականության պրոպագանդայի վերաբերյալ սույն գրքույկում նշված մեթոդներով ու ձևերով: Գրադարանավարը

պետք է նախաձեռնող լինի, ստեղծագործաբար մոտենա իր աշխատանքին, որոնի գրքի պրոպագանդայի նոր ձևեր, սուսումնասիրի առաջավոր գրադարանների աշխատանքի հարուստ փորձը, է՛լ ավելի ակտիվորեն պրոպագանդի լենինյան մեծահարուստ ժառանգությունը:

ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՊԱՐՏԻԱՅԻ ԵՎ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՊՐՈՊԱԳԱՆԴԱՆ

Ի Գրադարանավարների ամենօրյա խնդիրն է բնակչության լայն մասսաների մեջ պրոպագանդել Սովետական Միության Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության որոշումները: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել պարտիական համագումարների, ՍՄԿՊ Կենտկոմի պլենումների և ՍՍՌՄ Գերագույն սովետի որոշումների պրոպագանդային:

Պարտիական և կառավարական կարևոր փաստաթղթերի շուրջը գրադարաններում կարելի է կազմակերպել բուց ցուցադրումներ՝ ցուցափեղկեր, ցուցահանդեսներ, պլակատներ, որոնք կարելի է ձևավորել համապատասխան լողունգներով, կոշերով և քաղվածքներով:

Գրադարանավարը չպետք է սահմանափակվի միայն այդ նյութերի ցուցադրումով, անհրաժեշտ է այն դուրակցել կենդանի, աշխույժ դրույցի հետ, մարդկանց մեջ առաջացնի ավելի լավ աշխատելու ձգտում, ակտիվություն, օժանդակի աշխատանքի կազմակերպման հետագա բարելավմանը, աշխատանքային կարգապահության ամրապնդմանը և պլանների կատարմանը:

Պարտիայի որոշումների, կառավարական հաղորդագրությունների, պարտիայի և Սովետական պետության ղեկավարների ղեկուցումների, կարևոր նշանակություն ունեցող առաջնորդող հոդվածների ընթերցմանը և զրույցին անհրաժեշտ է խնամքով և լավ պատրաստվել: Ընթերցավարները պետք է

մի քանի անգամ կարգան նյութը, քնդգծեն այն տեղերը, որոնց վրա պետք է հրավիրվի ունկնդիրների ուշադրությունը: Նյութի ընթերցման ընթացքում հանձնարարվում է նշել համապատասխան փաստեր, օրինակներ, տվյալ շրջանի, հիմնորկ-ձեռնարկության արտադրական տեղամասի կյանքից:

Ջրույցների համար առանձնացված նյութերի մեջ մեծ տեղ են զրավելու նաև հասարակական-քաղաքական հանրամատչելի գրքերը և այն ակնարկները, որոնք հրատարակվում են թերթերում: Ցանկալի է գրադարանում պատրաստել հատուկ թղթապանակներ ուր կարելի է հավաքել մամուլում հրատարակված այն հոդվածները, որոնք լուսարանում են պարտիայի և կառավարության որոշումների կատարման ընթացքը: Այդ նյութերը առաջին հերթին անհրաժեշտ են ագիտատորներին, պրոպագանդիստներին, զեկուցողներին, հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարներին:

Պարբերական մամուլում լույս տեսնող առաջնորդող հոդվածները նվիրված են լինում զխավորապես օրվա կարևոր քաղաքական և տնտեսական խնդիրներին, գաղափարական հարցերին, Սովետական Միության կամ արտասահմանյան երկրների կյանքում կատարված կարևոր իրադարձություններին: «Պրավդա»-ի առաջնորդող հոդվածներում արվում է պարտիայի գիրեկտիվ նյութեր, առավել հուզող ու հրատապ հարցերի մասին պարտիայի քաղաքականության պարզաբանում: Անհրաժեշտ է ընթերցողների լայն շրջաններին ծանոթացնել «Պրավդա», ինչպես և «Սովետական Հայաստան» թերթերի առաջնորդողներին և զրանց շուրջը կազմակերպել զրույցներ:

ՄԱԿՊ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԱՆ

Գրադարանում հասարակական-քաղաքական գրականություն հետ տարվող աշխատանքի հիմքում պետք է դրվի մարքսիզմ-լենինիզմի պրոպագանդան:

Պարտիան պահանջում է դադափարական ճակատի բոլոր աշխատողներից, այդ թվում նաև գրադարանավարներից՝ մարքսիզմ-լենինիզմի տեսության պրոպագանդան սերտորեն կապել կոմունիստական շինարարության պրակտիկայի հետ: Պարտիան գաղափարական աշխատանքը չի դիտում իբրև լնքնանպատակ: Հետևելով լենինյան պատգամներին, պարտիան այդ աշխատանքի մակարդակը շափում է գործնական արդյունքներով, նրանով, թե այն ինչպիսի ունի ներգործություն է ունենում աշխատանքի վրա, ժողովրդի առջև դրված հիմնական խնդիրների, առաջին հերթին տնտեսական խնդիրների իրագործման վրա:

Կոմունիզմի նյութատեխնիկական բաղադրի ստեղծման և կոմունիստական հասարակական հարաբերությունների կազմավորման վրա գաղափարական աշխատանքի ազդեցությունը հսկայական է:

Գրադարանները հասարակական-քաղաքական գրքի ակտիվ պրոպագանդայի միջոցով պետք է օգնեն սովետական մարդկանց տիրապետելու Մարքս-լենինյան ուսմունքին, որը զինում է մեզ հասարակության զարգացման օրենքների իմացությունը, սովորեցնում է ճիշտ հասկանալ ընթացիկ իրադարձությունները, դաստիարակում է նորի զգացում, ստեղծագործական նախաձեռնություն, օգնում է սկզբունքային որո-

շումները բնորոշելու ամենատարբեր հարցերի վերաբերյալ, որոնք առաջանում են մարդկանց մոտ նրանց հասարակական գործունեության և արտադրական աշխատանքի ժամանակ: Մարքս-լենինյան ուսմունքը օգնում է ավելի պարզ տեսնելու մեր հեռանկարները, տիրապետելու պարտիական և պետական աշխատանքի լենինյան ոճին:

Ներկայումս հազարավոր ընթերցողներ մեծ հետաքրքրություն են ցուցաբերում Սովետական Միության Կոմունիստական պարտիայի պատմության նկատմամբ, նրանք ընդգրկված են պարտիական լուսավորության ցանցում:

Գրադարաններում անհրաժեշտ է ունենալ պարտիական և կոմերիտական քաղաքական լուսավորության ցանցի խրմբակներում ու սեմինարներում սովորողների ցուցակները: Գրադարանավարը պետք է հաշվի առնի նրանց, ովքեր վթարվում են ինքնուրույն ուսուցմամբ, նշի, թե ինչ թեմաներ են ուսումնասիրում և ըստ այնմ ընտրի համապատասխան գրականություն ու մեթոդական ձեռնարկներ:

Պարտիական լուսավորության ցանցում սովորողներին օգնելու նպատակով գրադարաններում կարելի է կազմակերպել ցուցահանդեսներ հետևյալ խորագրերով՝ «Օգնություն քաղ-լուս ցանցում սովորողներին», «Օգնություն ՍՄԿՊ պատմությանն ուսումնասիրողներին», «Օգնություն մարքսիզմ-լենինիզմի հիմունքները ինքնուրույն կերպով ուսումնասիրողներին», «Ինչ կարդալ Վ. Ի. Լենինի մասին», «Ինչ կարդալ դիալեկտիկական և պատմական մատերիալիզմի մասին», «Ինչ կարդալ ընթացիկ քաղաքականության հարցերի վերաբերյալ» և այլն:

Գրադարանավարը միևնույն ժամանակ կարող է կազմակերպել գրքերի թեմատիկ ցուցահանդեսներ, բաց գրադարակներ, ցուցափեղկեր, գրականության թեմատիկ տեսություններ, նոր գրքերի ինֆորմացիաներ, որոնք նախատեսվում են քաղաքական լուսավորության ցանցում սովորողներին օգնելու համար: Գրականության ցուցադրումները նպատակ ունեն բացահայտելու պարտիայի պատմության տարբեր ժամանա-

